# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԿԱՐՄՐԱՇԵՆ
# ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00

17.01.2018թ.

ՀՀ Արագածոտն մարզպետ
Պարոն՝ Ա.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Արագածոտն մարզի Կարմրաշեն համայնքի ավագանու 09.01.2018թ N_1_ից-N 6__կայացրած որոշումները:

Առդիր՝ __թերթից:

**Կարմրաշեն համայնքի ղեկավար՝** **Ա.Մելիքյան**

Ելք
17 01 2018թ.
7/280-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00

# ՈՐՈՇՈՒՄ

«09» Հունվարի 2018թվականիN 1

## ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով Կարմրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Կարմրաշեն համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 9-ի թիվ 1 նիստի օրակարգը հետևյալ տեսքով՝

1) Կարմրաշեն համայնքի 2018թ. տեղական բյուջեն հաստատելու մասին:
2) Կարմրաշեն համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին :
3) Կարմրաշեն համայնքապետարանի աշխատակազմիաշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնայի նդրույքաչափերը հաստատելու մասին:
4) Կարմրաշեն համայնքում 2018թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
5) Կարմրաշեն համայնքում աղբահանության վճարի դրույքաչափ սահմանելու մասին :

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ 0

Ավագանի՝
Մ.Անտոնյան
Վ.Աստրյան
Վ.Գրիգորյան
Ա.Եղիազարյան
Գ.Կնյազյան

Կարմրաշեն համայնքի ղեկավար՝ Ա.Մելիքյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00


## ՈՐՈՇՈՒՄ

«09» Հունվարի 2018թվականի N 2

## ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը , ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով Կարմրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Կարմրաշեն համայնքի 2018թ. բյուջեն համաձայն կից հավելվածի:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին և համայնքապետարանի աշխատակազմին միջոցներ ձեռնարկել համայնքի 2018թ.-ի տարեկան բյուջեն կատարելու ուղղությամբ:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ-0

**Ավագանի՝**
Մ.Անտոնյան
Վ.Ասատրյան
Վ.Գրիգորյան
Ա.Եղիազարյան
Գ.Կնյազյան

**Կարմրաշեն համայնքի ղեկավար՝** **Ա.Մելիքյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00

# ՈՐՈՇՈՒՄ

«09» Հունվարի 2018թվականի N 3

## ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 18-րդհոդվածի 11-րդ կետով Կարմրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Կարմրաշեն համայնքի ղեկավարի 2018թ. աշխատավարձի ամսական դրույքաչափը 198.000( մեկ հարյուր իննսունութ հազար) դրամ:

**Կողմ- 5** **Դեմ- 0Ձեռնպահ-0**

**Ավագանի՝**
Մ.Անտոնյան
Վ.Աստրյան
Վ.Գրիգորյան
Ա.Եղիազարյան
Գ.Կնյազյան

**Կարմրաշեն համայնքի ղեկավար՝** **Ա.Մելիքյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00

# ՈՐՈՇՈՒՄ

«09» Հունվարի 2018թվականի N 4

### ԿԱՐՄՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և«Համայնքային ծառայության մասին»ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով Կարմրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Կարմրաշեն համայնքապետարանի աշխատակազմիաշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

**Կողմ- 5** **Դեմ- 0Ձեռնպահ-0**

Մ.Անտոնյան
Վ.Ասատրյան
Վ.Գրիգորյան
Ա.Եղիազարյան
Գ.Կնյազյան

**Կարմրաշեն համայնքի ղեկավար** **Ա.Մելիքյան**

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Կարմրաշեն գյուղական համայնքի
ավագանու «09» հունվարի 2018 թվականի N4 որոշման

# ՀՀԱՐԱԳԱԾՈՏՆ ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 7

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | 20 % Լեռնային | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 190.000 | 8.000 | 198.000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 112.700 | 8.000 | 120.700 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 86.000 | 8.000 | 94.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 86.000 | 8.000 | 94.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 86.000 | 8.000 | 94.000 |
| Սպասարկող անձնակազմ | | | | |
| Մշակույթի տուն | 1 | 86.000 | 8.000 | 94.000 |
| հավաքարար | 1 | 86.000 | 8.000 | 94.000 |
| Ընդամենը | 7 | 732.700 | 56.000 | 788.700 |

**Կարմրաշեն համայնքի ղեկավար** **Ա.Մելիքյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00

## ՈՐՈՇՈՒՄ

«09» Հունվարի 2018թվականի N 5

## ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով«Տեղական տուրքերի և վճարների մասին»ՀՀօրենքի 10-րդ հոդվածները Կարմրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի տարածքում 2018թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

**Կողմ- 5** **Դեմ- 0Ձեռնպահ-0**

Մ.Անտոնյան
Վ.Ասատրյան
Վ.Գրիգորյան
Ա.Եղիազարյան
Գ.Կնյազյան

**Կարմրաշեն համայնքի ղեկավար** **Ա.Մելիքյան**

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Կարմրաշեն գյուղական համայնքի
ավագանու«09» հունվարի 2018 թվականի N5 որոշման

# ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների( ներառյալ ՝ոչհիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**Հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30.000 դրամ,

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մինչև 3.000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել մինչև 5.000 դրամ:

3. **Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

-մինչև 26 քառ. մետր ընդհ. մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյու եռամսյակի համար՝2.500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար մինչև 26 քառ. մետր ընդհ. մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ:

**4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ** տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

**Կարմրաշեն համայնքի ղեկավար՝** **Ա.Մելիքյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարմրաշեն համայնք ,հեռ. 0249-6-20-00

## ՈՐՈՇՈՒՄ

«09» Հունվարի 2018թվականի N 6

## ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ և 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին»ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով Կարմրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Սահմանել Կարմրաշեն համայնքի տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2018թ. Հետևյալ դրույքաչափը՝

- Կենցաղային աղբի համար համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50/հիսուն/ դրամ:

**Կողմ- 5** **Դեմ- 0Ձեռնպահ-0**

Մ.Անտոնյան
Վ.Ասատրյան
Վ.Գրիգորյան
Ա.Եղիազարյան
Գ.Կնյազյան

**Կարմրաշեն համայնքի ղեկավար** **Ա.Մելիքյան**